

ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կրթահամալիր) Արևմտյան դպրոց-պարտեզը (այսուհետ՝ դպրոց-պարտեզ) կրթահամալիրի մասնաճյուղ է:
2. Դպրոց-պարտեզի ղեկավարին (տնօրենին) կրթահամալիրի գործադիր տնօրենին (այսուհետ՝ Տնօրեն) ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):
3. Դպրոց-պարտեզն իրավաբանական անձ չէ, չունի առանձին հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
4. Դպրոց-պարտեզը Կրթահամալիրի կողմից լիազորված է իրականացնելու կրթահամալիրի գործունեության առարկայից, նպատակներից և խնդիրներից բխող գործունեություն:
5. Դպրոց-պարտեզի կանոնադրությունը և դրա փոփոխությունները Տնօրենի ներկայացմամբ հաստատում է Խորհուրդը:
6. Դպրոց-պարտեզն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կրթահամալիրի և դպրոց-պարտեզի կանոնադրություններով:
7. Դպրոց-պարտեզի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, բաբաջանյան 38/1:
8. Դպրոց-պարտեզը կարող է ունենալ չկողմնորոշված կնիք, ձևաթուղթ և խորհրդանիշ:
9. Կարճ անվանումն է՝ կրթահամալիրի Արևմտյան դպրոց-պարտեզ:
10. Դպրոց-պարտեզը ունի էլեկտրոնային կայք՝ west.mskh.am, որը գործում է որպես դպրոց-պարտեզի պաշտոնական տեղեկատվական օրգան, զանգվածային լրատվական միջոց և սոցիալական ցանց, ներառում է դպրոց-պարտեզի էլեկտրոնային մատենավարությունը, բլոգային ուսուցման համակարգը՝ մանկավարժական աշխատողների, սովորողների, ակումբների, խմբերի բլոգները, կրթահամալիրի աշխատողների, սովորողների, ծնողների փոստային համակարգը:
11. Դպրոց-պարտեզը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
12. Դպրոց-պարտեզում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԱՌԱՐԿԱՆ

13. Դպրոց-պարտեզի գործունեության **առարկան** նախադպրոցական, մինչև 6-րդ դասարան հանրակրթական, հատուկ (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) հեղինակային, լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումն է:

14. Դպրոց-պարտեզի գործունեության նպատակներն են՝

- ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը, առաջավոր կրթական, այդ թվում՝ կրթահամալիրի հետազոտող մանկավարժների մշակած մոտեցումների ներդրում.
- երեխաների (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած) ներդաշնակ ու բնական զարգացման համար մանկավարժական–հոգեբանական, սոցիալական անհրաժեշտ պայմանների ապահովում:

15. Դպրոց-պարտեզի խնդիրներն են.

- կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրի մշակումը, կիրառումը, տարածումը.
- դպրոց-պարտեզի, կրթահամալիրի հնարավորությունների օգտագործմամբ յուրաքանչյուր երեխայի (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխայի) ընդունակությունների դրսևորման և զարգացման պայմանների ապահովումը.
- ընդհանուր ներառական կրթության ապահովումը.
- սովորողի և աշխատողի ինքնուրույնության, նախաձեռնողականության ու անհատական պատասխանատվության առավելագույն մակարդակի ապահովումը.
- ֆիզիկական և մեղիա կրթական բաց միաջավայրի ապահովումը.
- կրթության սուբյեկտների միջև իրական ու լիարժեք հաղորդակցության ապահովումը՝ ժամանակակից տեղեկատվական ու հրատարակչական տեխնոլոգիաների ու միջոցների օգտագործմամբ.
- սովորողի լրացուցիչ կրթության կազմակերպումը:

III. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

- 16. Դպրոց-պարտեզի կառուցվածքը** Տնօրենի ներկայացմամբ հաստատում է Խորհուրդը: Իր կանոնադրական նպատակները և խնդիրները լուծելու համար դպրոց-պարտեզը ստեղծում է ուսումնական արհեստանոցներ, լաբորատորիաներ, ակումբներ, կաբինետներ:
- 17. Դպրոց պարտեզում գործում են** 2-5 տարեկանների խնամքի և զազացման խմբեր, «Իմացումի հրճվանք» ծրագրի 5 տարեկանների ուսուցման, 1-3-րդ դասարաններ, 4-5-րդ դասարաններ:
- 18. Դպրոց պարտեզում գործում է** տարատարիք սովորողների երկարացված օրվա ճամբար՝ որպես լրացուցիչ կրթություն:
- 19. Դպրոց-պարտեզում իրականացվող կրթական ծրագիրը** (այսուհետ՝ կրթական ծրագիր) կրթահամալիրում իրականացվող հեղինակային կրթական ծրագրի ենթածրագիրն է:

20. Ուսումնական աշխատանքները կազմակերպվում են կրթահամալիրի ուսումնական օրացույցի, ուսումնական ժամանակացույցի, դպրոց-պարտեզի ուսումնական օրացույցի, ենթածրագրի ուսումնական պլանի և դասացուցակների հիման վրա:
21. Ուսուցումը կազմակերպվում է խմբով՝ դասարան, սովորողների ընտրությամբ գործունեության խումբ, սովորողների նախասիրությունների զարգացման ակումբ, ճամփորդության խումբ, ճամբարական խումբ, ջոկատ, այցելուների խումբ և անհատական: Խմբերում սովորողների թիվը որոշվում է կրթահամալիրի ծախսերի նախահաշվով ամրագրված ցուցանիշների համաձայն:
22. Խմբային ուսուցումը կազմակերպվում է դասերի, ակումբային պարապմունքների, ուսումնական նախագծերի, ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների, ճամբարների, ստեղծագործական հավաքների, համերգների, ցուցահանդեսների, ներկայացումների (ուսումնական պարապմունքներ) ձևով:
23. Դպրոց-պարտեզում կիրառվում են առկա, հեռավար, առցանց, տնային ուսուցման ձևեր՝ սովորողին տալով պահին, պայմաններին համապատասխան ձևն ընտրելու հնարավորություն:
24. Տարրական կրթության կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացները կազմում են «Իմացումի հրճվանք» ծրագիրը, որի ղեկավար-դասվարը մասնակցում է գործունեության կազմակերպման բոլոր ձևերին:
25. Սանը դպրոց-պարտեզ ընդունվում է կրթահալիրում սահմանված կարգով:
26. Հիմնական կրթության 4-5-րդ դասարանների ծրագիրն ուղղված է Սովորողի բազային ուսումնական կարողությունների զարգացմանը, սահուն անցում է ապահովում առարկայական ուսուցման:
27. Լրացուցիչ կրթական ծրագիրն ուղղված է սովորողի կրթական պատվերի կատարմանը: Լրացուցիչ կրթական ծրագիրը բաղկացած է դասընթացներից, որոնք, որպես ծառայություններ՝ իրականացվում են ուսումնա-արտադրական արհեստանոցներում, լաբորատորիաներում, ակումբներում, կաբինետներում:
28. Դպրոց-պարտեզում ուսուցման լեզուն գրական հայերենն է:

IV. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

29. Դպրոց-պարտեզի ընթացիկ ղեկավարումն իրականացնում է տնօրենը:
30. Դպրոց-պարտեզում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ:
31. Մանկավարժական, ծնողական խորհուրդները իրենց գործունեությունը կարող են ծավալել նաև վիրտուալ միջավայրում:
32. Դպրոց-պարտեզի տնօրենը
 - կազմակերպում և ղեկավարում է դպրոց-պարտեզի ընթացիկ գործունեությունը.
 - Խորհրդի հաստատմանն է ներկայացնում դպրոցի-պարտեզի զարգացման ծրագիրը.

- մասնակցում է Խորհրդի, կրթահամալիրի վարչական խորհրդի, մասնաժողովի նիստերին.
- ղեկավարում է դպրոց-պարտեզի մանկավարժական խորհրդի աշխատանքները.
- ապահովում է դպրոցի-պարտեզի ենթակայքի աշխատանքը.
- մասնակցում է դպրոց-պարտեզի աշխատողի անհատական աշխատաժամանակի կազմման աշխատանքին և այն ներկայացնում Տնօրենի հաստատմանը.
- ապահովում է դպրոց-պարտեզում կրթահամալիրի ներքին կարգապահական կանոնների (այսուհետ՝ Կանոններ), աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների պահպանումը.
- նշանակում է դպրոց-պարտեզի կաբինետների ղեկավարներին.
- կազմակերպում է սովորողների ընդունելությունը դպրոց-պարտեզ.
- օրինական ներկայացուցչի (ծնողի) հետ, կրթահամալիրում սահմանված կարգով, կնքում է ուսումնառության պայմանագիր.
- կազմավորում է դպրոց-պարտեզի ուսումնական խմբերը.
- հաստատում է դպրոց-պարտեզի դասացուցակը և դրա փոփոխությունները.
- ուսումնական պլանին համապատասխան ապահովում է կրթական ծրագրի իրականացումը, կրթական գործընթացի կազմակերպումը.
- առողջական վիճակի պատճառով ժամանակավորապես հաճախել չկարողացող կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի համար, սահմանված կարգով, կազմակերպում է հեռավար, առցանց կամ տնային ուսուցում.
- ստեղծում է սովորողի և աշխատողի առողջության, հիգիենայի, սննդի, հանգստի, ֆիզիկական և հոգևոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ.
- վերահսկողություն է իրականացնում սովորողների սննդի, դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, սովորողի կողմից իր աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
- հետևում է պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերի վարմանը և պահպանմանը.
- ապահովում է պայմաններ սովորողների նախասիրության զարգացման դասընթացների գործունեության համար.
- ապահովում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքը.
- ներկայացնում է դպրոցի գործունեության կիսամյակային, տարեկան հաշվետվությունները.
- օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն օրենքների, հիմնադրի, նախարարության, Խորհրդի, Տնօրենի որոշումների, այլ իրավական

ակտերի և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

- կատարում է Տնօրենի հանձնարարություններ.
- տնօրենի բացակայության դեպքում, Տնօրենի որոշման համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

33. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է դպրոց-պարտեզում աշխատող բոլոր մանկավարժական աշխատողներից, կրթահամալիրի այլ մանկավարժական աշխատողներից: Մանկավարժական խորհուրդը քննարկում է՝

- դպրոց-պարտեզի զարգացման ծրագիրը և երաշխավորում է այն Խորհրդի հաստատմանը.
- ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը.
- մանկավարժական խորհրդի նիստերի օրակարգը նիստից երեք օր առաջ տեղադրվում է դպրոց-պարտեզի կայքում.
- մանկավարժական խորհրդի նիստերը բաց են.

34. Դպրոց-պարտեզի ծնողական խորհուրդը կազմավորվում է սովորողների ծնողներից:

35. Ծնողական խորհուրդը կարող է գրանցվել որպես հասարակական կազմակերպություն և իր գործունեությունը կազմակերպել օրենսդրությամբ սահմանված կարգով:

36. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոց-պարտեզի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

37. Դպրոց-պարտեզի գրասենյակի ղեկավարին աշխատանքի է նշանակում Տնօրենը՝ տնօրենի հետ խորհրդակցելով: Գրասենյակի ղեկավարի գործունեությունը կարգավորվում է պաշտոնական հրահանգով:

38. Տնօրենը տվյալ ուսումնական տարվա համար նշանակում է դպրոց-պարտեզի կազմակերպիչներ՝ տնօրենի ներկայացմամբ:

39. Կազմակերպիչը կրթահամալիրի մանկավարժական աշխատող է, որը պատասխանատու է դպրոցի՝ իրեն ամրակցված սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման համար: Կազմակերպիչի գործունեությունը կարգավորվում է պաշտոնական հրահանգով:

V. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

40. Տնօրենը կրթահամալիրին օգտագործման հանձնված և կրթահամալիրի սեփականություն հանդիսացող գույքից ամեն տարի դպրոց-պարտեզին օգտագործման է հանձնում տարածք, գույք, միջոցներ:

41. Դպրոց-պարտեզի տնօրենը պատասխանատու է դպրոց-պարտեզին հանձնված տարածքների, գույքի, սարքերի նպատակային օգտագործման և պահպանման համար:

- 42. Դպրոց-պարտեզի ֆինասական միջոցները գոյանում են մանկապարտեզային խմբերի սաների ծնողների վճարներից, պետության բյուջետային ֆինանսական հատկացումներից, սովորողների ուսումնառության պայմանագրով որոշված լրավճարներից, լրացուցիչ կրթական ծառայությունների վճարներից, բարեգործական, նպատակային ներդրումներից, օրենքով թույլատրված այլ աղբյուրներից:
- 43. Դպրոց պարտեզի ֆինանսական հաշվառումը կատարում է կրթահամալիրի հաշվապահությունը:

VI. ԴՊՐՈՑ-ՊԱՐՏԵԶԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՍՈՎՈՐՈՂԸ

- 44. Դպրոց-պարտեզում դասավանդողը կրթահամալիրի մանկավարժական աշխատող է: Դասավանդող կարող է ընդունվել կրթահամալիրի մանկավարժական աշխատողի պաշտոնի նկարագրությամբ որոշված պահանջներին բավարարող մասնագետը՝ Խորհրդի որոշած հրապարակային ընտրության կարգով:
- 45. Դպրոց-պարտեզում աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Կանոններով, աշխատողի պաշտոնի նկարագրությամբ, աշխատանքային պայմանագրով:
- 46. Դպրոց-պարտեզի սովորողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով, Կանոններով, ուսումնառության պայմանագրով:
- 47. Դպրոց-պարտեզի սովորողը պատասխանատվություն է կրում Կանոններով, ուսումնառության պայմանագրով իր պարտականությունների կատարման համար:
- 48. Դպրոց-պարտեզը, սահմանված կարգով, կարող է միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տասն օր առաջ տեղյակ պահելով սովորողի ծնողին՝ նրա և մասնաճյուղի միջև կնքված պայմանագրային դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանվելու դեպքում:

VII. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

- 49. Դպրոց-պարտեզը վերակազմակերպվում կամ լուծարվում է կրթահամալիրի Տնօրենի հիմնավորված առաջարկով՝ Խորհրդի որոշմամբ: